ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

16. հունվարի 2024թ.

N 11-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ԹԵՄԱՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի N 759-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 32-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) էլեկտրոնային եղանակով գնումներ կատարող պատվիրատուների գնումների համակարգողների՝ 2024 թվականին շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագիրը և թեմաները՝ համաձայն հավելված 1-ի.

2) թղթային եղանակով գնումներ կատարող պատվիրատուների գնումների համակարգողների՝ 2024 թվականին շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագիրը և թեմաները՝ համաձայն հավելված 2-ի.

3) գնումների համակարգողի ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատակիցների և գնումների համակարգողի որակավորում ունեցող ֆիզիկական անձանց 2024 թվականի շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագիրը և թեմաները՝ համաձայն հավելված 3-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝

Invalid signature

X

ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Signed by: POGHOSYAN ARMAN 3809820482

ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ֆինանսների նախարարի 2024 թվականի
հունվարի 16-ի N 11-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԸ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օր I

Թեմա 1 – Գնումների մասին ՀՀ օրենսդրության փոփոխություններ (1 ժամ)

Թեմա 2 – Գնումների մասին ՀՀ օրենսդրության կիրառության շրջանակում գործնական վարժություններ (4 ժամ)

Թեմա 3 - Ներկայացված նյութի քննարկում՝ հարց ու պատասխանի ձևով (1 ժամ)

Օր II

Թեմա 1 - Էլեկտրոնային գնումների համակարգերում գնման ընթացակարգերի կազմակերպման ընթացքում առաջացած խնդիրների վերհանում և պարզաբանում (4 ժամ)

Թեմա 2 - Էլեկտրոնային գնումների համակարգում հաշվետվողականության ապահովման գործընթացի կազմակերպում (1 ժամ)

Թեմա 3 - Քննարկում՝ հարց ու պատասխանի ձևով (1 ժամ)

Հավելված N 2
ՀՀ ֆինանսների նախարարի 2024 թվականի
հունվարի 16-ի N 11-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԸ

ԹՂԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օր I

Թեմա 1 – Գնումների մասին ՀՀ օրենսդրության փոփոխություններ (1 ժամ)

Թեմա 2 – Գնումների մասին ՀՀ օրենսդրության կիրառության շրջանակում գործնական վարժություններ (5 ժամ)

Օր II

Թեմա 1 - Գնումների գործընթացի շրջանակում կիրառվող փաստաթղթերի կազմման վարժություններ (գնման հայտերի, հրավերների կազմում) (4 ժամ)

Թեմա 2 - Ներկայացված նյութի քննարկում՝ հարց ու պատասխանի ձևով (2 ժամ)

Հավելված N 3
ՀՀ ֆինանսների նախարարի 2024 թվականի
հունվարի 16-ի N 11-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԸ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օր I

Թեմա 1 – Գնումների մասին ՀՀ օրենսդրության փոփոխություններ (1 ժամ)

Թեմա 2 – Գնումների մասին ՀՀ օրենսդրության կիրառության շրջանակում գործնական վարժություններ (4 ժամ)

Թեմա 3 - Ներկայացված նյութի քննարկում՝ հարց ու պատասխանի ձևով (1 ժամ)

Օր II

Թեմա 1 - Գնումների գործընթացի շրջանակում կիրառվող փաստաթղթերի կազմման վարժություններ (գնման հայտերի, հրավերների կազմում) (2 ժամ)

Թեմա 2 - Ընդհանրական տեղեկատվություն էլեկտրոնային գնումների համակարգերի միջոցով գնման գործընթացների կազմակերպման վերաբերյալ (3 ժամ)

Թեմա 3 - Քննարկում՝ հարց ու պատասխանի ձևով (1 ժամ)